ՀՀ ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ

ԱՐՍԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության

փորձագետ ԿԱՐԻՆԵ ԲԱԲԱՅԱՆԻՑ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԵՌԱՄՍՅԱ

/նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար/ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Մասնակցել եմ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում գործող իրավական ակտերի վերլուծությանն ու լրամշակմանը /ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 81-Ն, 29.11.2021թ., N 20-Ն, 09.06.2022թ. հրամաններ/:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախաարորության 2023 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների պլանը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու համար տրամադրվել է «1146.Հանրակրթության ծրագրի» «11016. Կրթական «Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում»» միջոցառման 2023 թվականին ձեռք բերվող 1-ին, 3-րդ և 4-րդ դասարանների դասագրքերի անվանացանկը: Երկրորդ դասարանի դասագրքերի ստեղծման համար հայտարարվել է դրամաշնորհային մրցույթ: Կազմվել են հայտահրավերներ, ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 2159-Ա/2, 23.11 2022թ. և N 2189-Ա/2, 28.11.2022թ. հրամանների նախագծեր. ձևավորվել են մրցութային հանձնաժողովներ, հրապարակվել է հայտարարություն մասնագետների փորձագիտական խմբում ընդգրվելու հայտերի հավաքագրման վերաբերյալ: Կատարվել է հայտերի քննարկում և ընդունում /աշխատանքներն ընթացքի մեջ են/:

Կազմել եմ «2023-2024 ուստարում 1-12 դասարաններում գործածության երաշխավորված դասագրքերի» վերաբերյալ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի նախագիծը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախաարորության 2023 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվելիք ապրանքների, աշխատանքների և

ծառայությունների գնումների պլանը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու համար տրամադրվել է «1146.Հանրակրթության ծրագրի» «11016.«Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում»» միջոցառման 2023 թվականին ձեռք բերվող դասագրքերի անվանացանկը:

Վերոնշյալ ծրագրի շրջանակում իրականացվում են 2024-2026 թվականների ՄԺԾԾ-ի պահանջվող աշխատանքները:

Որպես դպրոցի Խորհրդի անդամ, մասնակցել եմ Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան թիվ 66 հիմնական դպրոցի, Երևանի Մ. Գորգիսյանի անվան թիվ 158 հիմնական դպրոցի, Երևանի Ս. Հովսեփյանի անվան թիվ 115 ավագ դպրոցի, Վաղարշապատի Մ.Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոցի, Երևանի Մխիթար Սեբաստացու կրթահամալիրի կառավարման խորհուրդների աշխատանքներին:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հետ աշխատանքային պայմանագրերի լուծման հետ կապված ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով մասնակցել եմ փաստաթղթերի և գույքի հանձնման-ընդունման աշխատանքներին:

Գործող օրենքների և իրավական ակտերի շրջանակում քաղաքացիներին տրամադրվել է բանավոր և գրավոր տեղեկատվություն, ուսումնասիրվել և պատասխանվել է քաղաքացիների բազում և տարաբնույթ դիմումներին:

Կ.Բաբայան

09.02.2023թ.